Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2013թ. հոկտեմբերի 25-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները և Անկախ Պետությունների Համագործակցությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում համագործակցություն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից,

Անկախ Պետությունների Համագործակցության մարմիններում գաղտնի տեղեկության պաշտպանության ապահովման նպատակով,

հաշվի առնելով միջպետական գաղտնիքների պահպանման փոխադարձ ապահովման մասին 1993 թվականի հունվարի 22-ի համաձայնագիրը,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Տերմիններ և սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող հետևյալ տերմինները և սահմանումները ունեն հետևյալ նշանակությունը.

«գաղտնիության դրոշմագիր»՝ գաղտնի տեղեկությունների կրիչների և/կամ դրանց ուղեկցող փաստաթղթերի վրա դրված ռեկվիզիտ, որը վկայում է գաղտնի տեղեկությունների կրիչներում պարունակվող տեղեկությունների գաղտնիության աստիճանի մասին,

«պաշտոնատար անձինք»՝ յուրաքանչյուր Կողմի համար պաշտոններին համապատասխան քվոտաներով ամրագրված, Կողմերի կողմից ներկայացված, Անկախ Պետությունների Համագործակցության մարմինների կողմից հաստատված անձինք,

«գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն»՝ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու համար ֆիզիկական անձի իրավունք կամ լիազոր մարմնի և գաղտնի տեղեկատվության օգտագործմամբ գործունեության իրականացման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մարմնի իրավունք՝ տրված սույն Համաձայնագրի մասնակից պետության ազգային օրենսդրությանը և Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի որոշմամբ հաստատված՝ Անկախ Պետությունների Համագործակցության մարմիններում գաղտնի տեղեկատվությունից օգտվելու կանոններին (այսուհետ՝ Կանոններ) համապատասխան,

«գաղտնի տեղեկատվության մատչելիություն»՝ գաղտնի տեղեկատվությանը սահմանված կարգով արտոնված ծանոթացում և/կամ գաղտնի տեղեկատվության հետ ֆիզիկական անձի աշխատանք,

«գաղտնի տեղեկատվության պաշտպանություն»՝ գաղտնի տեղեկատվության չարտոնված տարածումը արգելելու և կրիչների պահպանության նպատակով ձեռնարկվող՝ իրավական, վարչական, կազմակերպչական, ինժեներատեխնիկական և այլ միջոցներ,

«իրավասու մարմիններ»՝ Կողմերի մարմիններ, որոնք պատասխանատու են սույն Համաձայնագրի իրականացման համար,

«գաղտնի տեղեկատվության չարտոնված տարածում»՝ գաղտնի տեղեկության հայտնում, փոխանցում, տրամադրում, առաքում, հրապարակում կամ ցանկացած այլ եղանակով դրա հետ ծանոթանալու իրավունք չստացած իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցնում կամ դրանց կրիչների կորուստ կամ հափշտակություն,

«գաղտնի տեղեկատվության կրիչներ»՝ նյութական օբյեկտներ, այդ թվում՝ ֆիզիկական դաշտեր, որոնցում գաղտնի տեղեկատվությունը գտնում է իր արտացոլանքը խորհրդանիշերի, կերպարների, ազդանշանների, տեխնիկական լուծումների և գործընթացների տեսքով,

«Անկախ Պետությունների Համագործակցության մարմիններ»՝ Անկախ Պետությունների Համագործակցության 1993 թվական հունվարի 22-ի կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) և Անկախ Պետությունների Համագործակցության այլ փաստաթղթերով նախատեսված կարգով ստեղծված՝ ԱՊՀ կանոնադրական և այլ մարմիններ, որոնք իրականացնում են գործունեություն գաղտնի տեղեկատվության օգտագործմամբ,

«գաղտնի տեղեկատվության գաղտնազերծում»՝ գաղտնի տեղեկատվության տարածման սահմանափակումների վերացմանն ուղղված միջոցառումների ամբողջություն և դրանց կրիչներին հասանելիություն,

«գաղտնի տեղեկատվություն»՝ ԱՊՀ շրջանակներում համագործակցության ընթացքում ստացվող (փոխանցվող) և/կամ ստեղծված (ձևավորված)՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից ազգային օրենսդրությանը, իսկ ԱՊՀ մարմիններում՝ սույն Համաձայնագրին և Կանոններին համապատասխան պաշտպանվող, սույն Համաձայնագրի մասնակից պետություններից մեկի պետական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ ցանկացած ձևով արտահայտված, որոնց չթույլատրված տարածումը կարող է վնասել Կողմերի շահերը և անվտանգությանը,

«գաղտնիության աստիճան»՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ, իսկ ԱՊՀ մարմիններում՝ սույն Համաձայնագրով և Կանոններով հաստատված՝ տեղեկատվության չափանիշների սահմանազատում,

«լիազոր մարմիններ»՝ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների պետական մարմիններ և/կամ կազմակերպություններ, որոնք ունեն գաղտնի

տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն, լիազորված են փոխանցելու, ստանալու, պահպանելու, պաշտպանելու և օգտագործելու գաղտնի տեղեկատվությունը:

Հոդված 2

Համաձայնագրի առարկան

Սույն Համաձայնագրի առարկան ԱՊՀ շրջանակներում համագործակցության իրականացման ընթացքում գաղտնի տեղեկատվության պաշտպանության ապահովումն է:

Հոդված 3

Իրավասու մարմինները, լիազոր մարմինները և Անկախ Պետությունների Համագործակցության մարմինները

1. Գաղտնի տեղեկատվության պաշտպանության ոլորտում համագործակցությունն իրականացվում է իրավասու մարմնի միջոցով:

2. Իրավասու մարմինները որոշվում են յուրաքանչյուր Կողմի կողմից, և նրանց մասին տեղեկություններն ուղարկվում են ավանդապահին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը պահպանման հանձնելիս: Իրավասու մարմնի փոփոխման դեպքում Կողմը մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացնում է ավանդապահին:

3. Անկախ Պետությունների Համագործակցության իրավասու մարմին է հանդիսանում Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեն:

4. Իրավասու մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում փոխգործակցում են անմիջականորեն:

5. Գաղտնի տեղեկատվության օգտագործմամբ գործունեություն իրականացնող ԱՊՀ մարմինների ցանկը (այսուհետ՝ ցանկ) ձևավորում է ԱՊՀ գործադիր կոմիտեն:

Սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում ԱՊՀ գործադիր կոմիտեն ուղարկում է ցանկը սույն Համաձայնագրի մասնակից պետություններին:

Ցանկում փոփոխությունների դեպքում ԱՊՀ գործադիր կոմիտեն 1 ամսվա ընթացքում գրավոր ծանուցում է սույն Համաձայնագրի մասնակից պետություններին:

6. Լիազոր մարմինների և ԱՊՀ մարմինների փոխգործակցության կազմակերպումն իրականացվում է իրավասու մարմինների հետ համաձայնեցմամբ:

Հոդված 4

Գաղտնի տեղեկատվության պաշտպանություն

1. Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, ազգային օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը ապահովելու համար:

2. ԱՊՀ մարմիններն իրականացնում են գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը սույն Համաձայնագրի, ինչպես նաև ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված Կանոնների համաձայն:

3. ԱՊՀ մարմիններ ուղարկված պաշտոնատար անձանց սույն Համաձայնագրի մասնակից պետությունը իր կողմից տրամադրում է գաղտնի տեղեկատվությանն առնչվելու թույլտվություն ԱՊՀ մարմնի կազմած պաշտոնների ցանկի հիման վրա, որոնց փոխարինումը ենթադրում է գաղտնի տեղեկատվությանն առնչություն, և այդ մասին գրավոր տեղեկացնում է ԱՊՀ համապատասխան մարմին: ԱՊՀ մարմիններում կնքված աշխատանքային պայմանագրերի և գործարքների հիման վրա իբրև փորձագետներ աշխատող անձանց (բացի վարչատնտեսական անձնակազմից) թույլտվությունը տրվում է Կանոնների համաձայն:

4. Յուրաքանչյուր Կողմ ճանաչում է գաղտնի տեղեկությանն առնչվելու թույլտվությունը, որը տրված և ձևակերպված է մյուս Կողմի կողմից:

Հոդված 5

Գաղտնիության աստիճանների հարաբերակցությունը

1. ԱՊՀ մարմիններում հաստատվում են գաղտնի տեղեկատվության հետևյալ գաղտնիության աստիճանները և նրանց կրիչների համար համապատասխան գաղտնիության դրոշմագրերը. «հատուկ կարևորության», «հույժ գաղտնի», «գաղտնի»:

2. ԱՊՀ շրջանակներում համագործակցության ընթացքում օգտագործվող գաղտնի տեղեկատվության գաղտնիության աստիճանները և այդ աստիճաններին համապատասխանող գաղտնիության դրոշմագրերը հարաբերակցվում են հետևյալ կերպով.

	Գաղտնիության աստիճանները և գաղտնիության դրոշմագրերը		
	«Հատուկ կարևորության»	**«Հույժ գաղտնի»**	**«Գաղտնի»**
Հայաստանի Հանրապետությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Բելառուսի Հանրապետությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Ղազախստանի	«Հատուկ	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»

Հանրապետությունում	կարևորության»		
Ղրղզստանի Հանրապետությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Մոլդովիայի Հանրապետությունում	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»	«Կոնֆիդենցիալ» «Սահմանափակ օգտագործման»
Ռուսաստանի Դաշնությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Տաջիկստանի Հանրապետությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Թուրքմենստանում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Ուզբեկստանի Հանրապետությունում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
Ուկրաինայում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»
ԱՊՀ մարմիններում	«Հատուկ կարևորության»	«Հույժ գաղտնի»	«Գաղտնի»

Հոդված 6

Գաղտնի տեղեկատվության պաշտպանության միջոցները

1. Սույն Համաձայնագրին համապատասխան՝ Կողմերը.

առանց փոխանցող Կողմի գրավոր թույլտվության՝ չեն փոխում ստացված գաղտնի տեղեկատվության գաղտնիության աստիճանը և դրանց կրիչների գաղտնիության դրոշմագիրը,

օգտագործում են Կողմի կողմից ստացված գաղտնի տեղեկատվությունը բացառապես դրանք փոխանցելիս նախատեսված նպատակներով և պայմաններով,

չեն փոխանցում գաղտնի տեղեկատվությունը՝ առանց այն փոխանցող Կողմի նախօրոք տված գրավոր համաձայնության,

տրամադրում են մատչելիություն գաղտնի տեղեկատվությանը այն ծավալով, որն անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն ունեցող անձանց՝ գաղտնի պաշտոնեական (գործառնական) պարտականություններն իրականացնելու համար:

2. Համագործակցության ընթացքում ձևավորված տեղեկատվության գաղտնիության աստիճանը որոշվում կամ փոփոխվում է Կողմերի լիազոր կամ իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ:

3. Համագործակցության ընթացքում ձևավորված գաղտնի տեղեկատվության գաղտնազերծումը կատարվում է Կողմերի լիազոր կամ իրավասու մարմինների համաձայնությամբ:
4. Ստացված գաղտնի տեղեկատվության պատճենահանումը կամ կրկնօրինակումը ԱՊՀ մարմիններում իրականացվում է փոխանցող Կողմի լիազոր մարմնի համաձայնությամբ և ստանում է փաստաթղթային ձևակերպում:

Գաղտնի տեղեկատվության պատճենահանման կամ կրկնօրինակման դեպքում գաղտնի տեղեկատվության կրիչի վրա դրվում է գաղտնիության դրոշմագիր՝ բնօրինակի գաղտնիության դրոշմագրին համապատասխան:

Գաղտնի տեղեկատվության կրիչների պատճենահանման կամ կրկնօրինակման արդյունքում ստացված քանակի վերաբերյալ տեղեկությունն ուղարկվում է գաղտնի տեղեկատվությունը փոխանցած Կողմի լիազոր մարմնին:

5. Գաղտնի տեղեկատվության կրիչների ոչնչացումը հաստատվում է փաստաթղթերով, իսկ ոչնչացման բուն գործընթացը պետք է ապահովի դրա վերարտադրման և վերականգման անհնարինությունը: Գաղտնի տեղեկատվության կրիչների ոչնչացման մասին գրավոր ծանուցվում է դա փոխանցած Կողմի լիազոր մարմինը:

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են սահմանել գաղտնի տեղեկատվության պաշտպանության լրացուցիչ միջոցներ:

Հոդված 7

Գաղտնի տեղեկատվության փոխանցումը

1. Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գաղտնի տեղեկատվության փոխանցումը ԱՊՀ մարմիններին իրականացվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան՝ ելնելով սեփական շահերից:

2. ԱՊՀ մարմիններում գաղտնի տեղեկատվությունը փոխանցվում է սույն Համաձայնագրի մասնակից պետությունների ներկայացուցիչներին նշված անձանց կողմից համապատասխան գաղտնիության աստիճանի՝ գաղտնի տեղեկատվությանն առնչվելու իրենց լիազորությունները հաստատելուց հետո կամ ուղարկվում է Կողմերի լիազոր կամ իրավասու մարմիններին ուղարկող Կողմի որոշած ծավալով:

3. Գաղտնի տեղեկատվության փոխանցումը կատարվում է դիվանագիտական ուղիներով՝ սուրհանդակային ծառայության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցված այլ եղանակով:

Զգալի ծավալի գաղտնի տեղեկատվության կրիչների փոխանցման համար յուրաքանչյուր առանձին դեպքում Կողմերի լիազոր մարմինները իրավասու

մարմինների հետ համաձայնեցմամբ պայմանավորվում են տեղափոխման եղանակի, երթուղու և ուղեկցման ձևի մասին:

Հոդված 8

Այցելություն ԱՊՀ մարմիններ

1. ԱՊՀ մարմին այցելություն կազմակերպելիս, որի ընթացքում նախատեսվում է գաղտնի տեղեկություններին առնչություն, Կողմերի իրավասու կամ լիազոր մարմինները գործուղվող անձի վերաբերյալ ԱՊՀ համապատասխան մարմնին նախապես գրավոր ծանուցում են ուղարկում հետևյալ տեղեկությունների պարունակությամբ.

անուն, հայրանուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ և ծննդավայր, քաղաքացիություն, անձնագրի համար ու սերիա,

պաշտոն, Կողմի իրավասու կամ լիազոր մարմնի անվանում,

համապատասխան գաղտնիության աստիճանի գաղտնի տեղեկության թույլտվության առկայության վերաբերյալ տեղեկություն,

այցի ենթադրյալ ամսաթիվը և տևողությունը,

այցի նպատակը:

ԱՊՀ մարմնում գործուղվող անձանց համար գաղտնի տեղեկատվության աշխատանքի հետ առնչվելու հիմք է հանդիսանում այդ անձանց մասին նշված ծանուցումը:

2. Այդպիսի այցելությունների ընթացքում գործուղվող անձինք ստորագրությամբ ծանոթանում են Կանոններին և պարտավոր են դրանք պահպանել:

Հոդված 9

Ծախսերը

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած բոլոր ծախսերը Կողմերը կրում են ինքնուրույն, եթե չեն պայմանավորվում այլ բանի մասին:

Հոդված 10

Գաղտնի տեղեկատվության պաշտպանության պահանջների խախտում

1. Գաղտնի տեղեկատվության պաշտպանության պահանջների խախտման բացահայտված փաստի մասին անհապաղ տեղեկացվում է այն Կողմի իրավասու մարմինը, որը փոխանցել է գաղտնի տեղեկատվությունը:

2. Գաղտնի տեղեկատվության չթույլատրված տարածման փաստի վերաբերյալ անցկացվում է քննություն, որպես կանոն, այն Կողմի կողմից, որտեղ բացահայտվել է չարտոնված տարածման փաստը: Արդյունքների և ձեռնարկված միջոցների մասին

ծանուցվում է այն Կողմի իրավասու մարմինը, որը փոխանցել է գաղտնի տեղեկատվությունը:

3. Գաղտնի տեղեկատվության չարտոնված տարածման փաստի առիթով Կողմերի իրավասու կամ լիազոր մարմինները օգնություն են ցուցաբերում քննություն իրականացնելիս՝ անհրաժեշտության դեպքում ուղարկելով իրենց ներկայացուցիչներին:

4. Գաղտնի տեղեկատվության չթույլատրված տարածմամբ հասցված վնասի չափը և փոխհատուցման կարգը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշվում է Կողմերի լիազոր մարմինների համաձայնությամբ՝ անհրաժեշտության դեպքում իրավասու մարմինների ներգրավմամբ:

5. Այն անձը, որը թույլ է տվել գաղտնի տեղեկության չարտոնված տարածում, պատասխանատվություն է կրում այն պետության ազգային օրենսդրության համապատասխան, որի քաղաքացին է:

Հոդված 11

Այլ միջազգային պայմանագրերի հետ հարաբերակցությունը

1. Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են նրա համար այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից է:

2. Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ կնքել այլ միջազգային պայմանագրեր այն հարցերով, որոնք սույն Համաձայնագրի առարկա են և չեն հակասում Համաձայնագրի նպատակներին:

Հոդված 12

Փոփոխություններ և լրացումներ

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 13

Վիճելի հարցեր, խորհրդակցություններ

1. Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում առաջացող վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի իրավասու մարմինների խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով: Այդպիսի խորհրդակցությունների և բանակցությունների ժամանակ շարունակում են կիրառվել

սույն Համաձայնագրով նախատեսված՝ գաղտնի տեղեկատվության պաշտպանության միջոցները:

2. Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով իրավասու մարմիններն անցկացնում են համատեղ խորհրդակցություններ, փոխանակում են նորմատիվ իրավական ակտեր գաղտնի տեղեկատվության պաշտպանության բնագավառում, ինչպես նաև իրականացնում են այլ համագործակցություն:

Հոդված 14

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած ԱՊՀ մասնակից պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը լրանալուն պես: Այդ օրվանից էլ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Անկախ Պետությունների Համագործակցության համար:

ԱՊՀ մասնակից այն պետությունների համար, որոնք ներպետական ընթացակարգերն ավարտել են ավելի ուշ, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը լրանալուն պես:

Հոդված 15

Միացումը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է ԱՊՀ ցանկացած մասնակից պետության միանալու համար՝ ավանդապահին անդամակցության մասին փաստաթուղթը փոխանցելու միջոցով: Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթը ավանդապահի ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը լրանալուն պես:

Հոդված 16

Համաձայնագրի գործողության և գործողության դադարեցման ժամկետը

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Սույն Համաձայնագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն Համաձայնագրից այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին դուրս գալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ և կարգավորելով Համաձայնագրի գործողության ժամանակահատվածում առաջացած ֆինանսական ու այլ պարտավորությունները:

2. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում ԱՊՀ շրջանակներում Կողմերի համագործակցության ընթացքում փոխանցված կամ ձևավորված գաղտնի տեղեկատվության նկատմամբ շարունակում են կիրառել դրա պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, քանի դեռ տեղեկությունը չի գաղտնազերծվել փոխանցող Կողմի կողմից:

Հոդված 17

Համաձայնագրի լեզուն

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցելիս աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Կատարված է Մինսկ քաղաքում 2013 թվականի հոկտեմբերի 25-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա վավերացված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

/ստորագրություն/

Հայաստանի Հանրապետության Կողմից՝

/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Թուրքմենստանի կողմից՝

Ղազախստանի Հանրապետության կողմից՝ */ստորագրություն/*

Ուզբեկստանի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Ուկրաինայի կողմից՝

Մոլդովայի Հանրապետության կողմից՝

/ստորագրություն/

Անկախ Պետությունների Համագործակցության կողմից՝

/ստորագրություն/

Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ձևավորված իրավասու մարմինների ցանկը

Բելառուսի Հանրապետություն՝ պետական անվտանգության կոմիտե
Ռուսաստանի Դաշնություն՝ անվտանգության դաշնային ծառայություն
Ուզբեկստանի Հանրապետություն՝ ազգային անվտանգության ծառայություն
Անկախ Պետությունների Համագործակցություն՝ ԱՊՀ գործադիր կոմիտե

ՏԵՂԵԿԱՆՔ

հաստատման նպատակահարմարության մասին

<<Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին>> համաձայնագրի նպատակն է Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում համագործակցության իրականացման ընթացքում գաղտնի տեղեկատվության պաշտպանության ապահովումը:

Համաձայնագրի հաստատումը նպատակահարմար է՝ ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև գաղտնի տեղեկատվության փոխանակման և պաշտպանության իրավական փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առկա պահանջից, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության ընթացքում գաղտնի տեղեկատվության փոխանակման և պաշտպանության համար կանոններ սահմանելու անհրաժեշտությունից:

Ազգային անվտանգության ծառայություն

ՏԵՂԵԿԱՆՔ

պատասխանատու մարմինների վերաբերյալ

<<Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին>> համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմինը որոշվում է յուրաքանչյուր Կողմի կողմից, և դրա մասին տեղեկատվությունն ուղարկվում է ավանդապահին համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը պահպանման հանձնելիս:

Ազգային անվտանգության ծառայություն

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2018 թվականի N ____ - Ա

<<ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Միջազգային պայմանագրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Կառավարությունը ***որոշում է.***

1. Հավանություն տալ 2013 թվականի հոկտեմբերի 25-ին Մինսկ քաղաքում ստորագրված <<Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին>> համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծին:

2. Հրամանագրի նախագիծը ներկայացնել Հայաստանի Հանրապետության նախագահի ստորագրմանը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

<<ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև <<Միջազգային պայմանագրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի.

1. Հաստատել 2013թ. հոկտեմբերի 25-ին ստորագրված <<Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին>> համաձայնագիրը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. ---------- -----

Երևան

ՆՀ- ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/ 11793
05.11.2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վանեցյան,

Հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի դրույթները՝ կից ներկայացնում ենք 2013թ. հոկտեմբերի 25-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) բնօրինակի հաստատված պատճենը, Համաձայնագրի պաշտոնապես հաստատված հայերեն թարգմանությունը, Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին ՀՀ արտաքին գործերի նախարարության եզրակացությունը և ուժի մեջ մտնելու կարգի մասին տեղեկանքը:

Հայտնում ենք, որ Համաձայնագրի հետագա ընթացքն անհրաժեշտ է ապահովել Օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք նաև «Համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի, «Համաձայնագիրը հաստատելու մասին» Հանրապետության նախագահի հրամանագրի, «Համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման, «Համաձայնագիրը հաստատելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման և «Հայաստանի Հանրապետության Կառավարության ներկայացուցիչ նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծերի ձևանմուշները՝ ըստ կիրառելիության օգտագործելու նպատակով:

Առդիր՝ 1 փաթեթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ**

Կատարող՝ Նաիրա Գասպարյան
Միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչություն
060-620/402

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՏԵՂԵԿԱՆՔ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2013թ. հոկտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից:

Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության և Անկախ պետությունների համագործակցության կողմից:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած ԱՊՀ մասնակից պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը լրանալուն պես: Այդ օրվանից էլ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Անկախ Պետությունների Համագործակցության համար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ուզբեկստանի Հանրապետության համար:

2013թ. հոկտեմբերի 25-ին ստորագրված «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

N 01/14/629329-18

«30» 11 2018թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վանեցյան

Ի լրումն ՀՀ արդարադատության նախարարության 2018թ. նոյեմբերի 20-ի թիվ 01/14/628244-18 ելից գրության և համաձայն «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթների՝ Ձեզ ենք ներկայացնում «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև վերոնշյալ համաձայնագիրը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լրամշակված եզրակացությունը:

Առդիր՝ 1 էլ. ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

30.11.2018

X

Artak Zeynalyan

ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչություն
Հեռ. (010) 594-176

Արդարադատության
Նախարարություն

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայնագիրը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր:

Միաժամանակ գտնում ենք, որ Համաձայնագրում վավերացման ենթակա դարձնող հիմքեր առկա չեն:

**Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ info@moj.am

20.12.2018թ. N 01/14/630973-18

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վանեցյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի դեկտեմբերի 7-ի 11/1096 գրության՝ կից ներկայացվում է ««Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

19.12.2018

X

Artak Zeynalyan

Կատարող՝ Մարգարիտա Կարապետյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-28

Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագծի վերաբերյալ

««Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

ՀՀ ԱՆ Իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 055, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

04/5-3/21272-18 2018-11-21

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ի պատասխան ՀՀ Ազգային անվտանգության ծառայության՝
ս.թ. նոյեմբերի 12-ի թիվ 11/1013 գրության

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ կից տրամադրում ենք «Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրի վերաբերյալ մեր եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Տաթև Աշչյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 011 800 322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 055, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին, այդ թվում՝ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթների և տվյալ տարվա համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած «Պետական բյուջեի մասին» օրենքում չներառված պարտավորությունների մասին

«Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող, եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր 11/1015
12.11.2018թ.

01/9944-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վանեցյան

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում եմ, որ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակում, «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին» համաձայնագրով Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն և խնդրում եմ չեղարկել 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 01/9594-18 գրությունը:

Հարգանքով՝

**ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Կատարող Գառնիկ Հովհաննիսյան
Հեռախոս 011 52 63 89